

## ԱՐԵՄՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՔ

Ուրբաթ, 1 Յունիսի, 2007

Հայաստանի անկախութեան 89-րդ տօնի՝ Մայիսի 28-ի առթիւ, Կիրակի, Մայիսի 27-ի առաւօտեան ժամը 10-ից մինչեւ երեկոյեան ժամը 10-ը տեղի ունեցաւ Արեւմտեան Ամերիկայի Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան կազմակերպած փառատօնը Հոլիվուդի Little Armenia քաղաքամասում: Փառատօնին իրենց յատուկ տաղաւարներով մասնակցեցին գաղութիս բազմաթիւ միութիւններ ու կազմակերպութիւններ, որոնց թւում ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի Հանրային Կապի Յանձնախումբը, Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը, Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւնը, ՀՕՄ-ի «Ջաւախք» Հիմնադրամը, Համազգային Հայ Կրթական ու Մշակութային Ընկերակցութիւնը, Հ.Ս.Ը.Մ.ը եւ բազմաթիւ այլ ընկերութիւններ ու հաստատութիւններ: Փառատօնը եզակի առիթ հանդիսացաւ, որ ազգային տարբեր պատկանելիութեամբ շուրջ տասը հազար այցելուներ ծանօթանան յիշեալ կազմակերպութիւնների գործունէութեան հետ եւ հայկական երգ ու պարի մթնոլորտում հաճելի ժամանց անցկացնեն, ճաշակելով հայկական համադրան ճաշեր, որոնք սպասարկուում էին զանազան տաղաւարներում:



Անցեալ շաբաթավերջին Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի երկու պատուիրակութիւններ հանդիպումներ ունեցան Հայոց Տեղասպանութեան բանաձեւի համահեղինակ կոնգրեսական Ադամ Շիֆի եւ Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների պալատի խօսնակի օգնական Հաւիէ Բեսեռայի հետ, քննելով ամերիկահայութեանն առնչուող մի շարք հրատապ հարցեր: Ձոյգ հանդիպումները, որոնց ընթացքում քննարկուեցին օրէնսդրական մարտավարութիւններ, առիթ են հանդիսացել ամրապնդելու ամերիկահայութեան կապերը յիշեալ կոնգրեսականների հետ:



Ինչպէս տեղեկացուում է Ֆրեզնոյի Հայկական համագաղութային վարժարանից, ամերիկահայ բարերար Չարլի Քէյեանը 685,000 դոլար է նուիրել վարժարանին, նոր հողատարածք գնելու եւ այդտեղ վարժարանի նոր շէնքը կառուցելու ծրագիրը իրագործելու համար: Իր հիմնադրման 30ամեակը տօնող վարժարանը, որ 2001 թուականից ի վեր գործում է վարձուած մի եկեղեցու շրջափակում, առաջիկայ ուսումնական տարեշրջանին կը փոխադրուի նոր գնուած հողատարածքի վրայ զետեղուելիք ժամանակաւոր կառոյցներում: Ակնկալուում է, որ վարժարանի կառուցման աշխատանքները ամբողջանան հինգ տարուայ ընթացքում: Ֆրեզնոյում ծնուած Քէյեանը 2004 թուականին 100,000 դոլար նուիրելով հաստատել էր նաեւ կրթական հիմնադրամ՝ կարիքաւոր հայ աշակերտներին օգնելու համար:

Այս լուրերը տրամադրուում են  
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի  
Կենտրոնական Կոմիտէի  
Հանրային Կապի Գրասենեակի  
կողմից  
ARF Central Committee  
Office of Public Relations  
Contact Person: Saro Nazarian  
[PublicRelations.ARF@hotmail.com](mailto:PublicRelations.ARF@hotmail.com)  
Tel: (818) 243-7059  
Fax: (818) 243-1467

Սոյն լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:

Լուրերը կարելի է վերատպել:

Լուրերի մանրամասնութիւնների համար կարդացե՛ք «Ասպարէզ» օրաթերթը:

